ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հունվարի 2020թ. N 1-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ԳՐԱՖԻԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 2-րդ մասով և Ջերմուկ համայնքի ղեկավարի 2013 թվականի հոկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 102-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի համաձայն **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների և համայնքային ենթակայության կազմակերպությունների տնօրենների 2020 թվականի ամենամյա արձակուրդների գրաֆիկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 հունվարի 9
Ջերմուկ

Հավելված

Ջերմուկ համայնքի ղեկավարի 2020 թ.
հունվարի 9-ի N 1-Ա որոշման

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ԳՐԱՖԻԿ

Հ/հ	Պաշտոն	Ազգանուն, անուն	Արձակուրդի ժամանակահատվածը	Օրերի քանակը
1	համայնքի ղեկավար	Հովհաննիսյան Վարդան	սեպտեմբեր	24
2	համայնքի ղեկավարի տեղակալ	Մարգարյան Սամվել	փետրվար	24
3	համայնքի ղեկավարի խորհրդական	Դավթյան Հայկ	հունիս	24
4	համայնքի ղեկավարի օգնական	Զաքարյան Արփինե	նոյեմբեր	24
5	վարչական ղեկավար	Մկրտչյան Հայրապետ	օգոստոս	24
6	վարչական ղեկավար	Ասատրյան Սեդրակ	սեպտեմբեր	24
7	վարչական ղեկավար	Աբրահամյան Անդրանիկ	Տրամադրվել է 2019-ի նոյեմբերին	-
8	վարչական ղեկավար	Առաքելյան Ռոման	մայիս	24
9	աշխատակազմի քարտուղար	Թադևոսյան Գոհար	մարտ, նոյեմբեր	48
10	Սոց. աջակցության բաժնի պետ	Սաֆարյան Արա	ապրիլ, հոկտեմբեր	16+24
11	ՔԿԱԳ բաժնի պետ	Սաղաթելյան Լուսիկ	սեպտեմբեր	24
10	Ֆինանսական բաժնի պետ	Ղազարյան Արմինե	հուլիս	24
11	Գլխավոր մասնագետ-աուդիտոր	Հայրապետյան Արման	հուլիս, սեպտեմբեր	12+24
12	«Զատիկ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրեն	Գայանե Հովհաննիսյան	ապրիլ, հոկտեմբեր	5+25
13	«Ջերմուկի համայնքի Շ. Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն	Մանուկյան Գոհար	հուլիս	25

14	«Ջերմուկի համայնքի Ռ. Մելիքյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն	Արմեն Խուրշուդյան	հուլիս	25
15	«Ջերմուկի համայնքի ճոպանուղի» ՀՀ տնօրեն	Արմեն Թադևոսյան	մարտ	24
18	«Ջերմուկ համայնքի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրեն	Գոռ Թադևոսյան	ապրիլ, դեկտեմբեր	20+20
19	«Ջերմուկի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն	Պավլիկ Հարությունյան	ապրիլ	24
20	«Ջերմուկի համայնքի քաղաքային գրադարան» ՀՀ տնօրեն	Զեմֆիրա Սարգսյան	նոյեմբեր	24
21	«Գնդեվազի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	Սաթենիկ Ներսիսյան	օգոստոս	25

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հունվարի 2020թ. N 2-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-Ի N 250-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի և 3-րդ կետի հիման վրա **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2019 թվականի նոյեմբերի 8-ի «Ջերմուկ համայնքի բնակիչ Արկադի Մնացականյանին շինարարության թույլտվություն տալու մասին» N 250-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 2-րդ կետում «Խաչատրյան» բառը (ազգանունը) փոխարինել «Մնացականյան» (ազգանունը) բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 հունվարի 9
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հունվարի 2020թ. N 3-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 16-րդ ենթակետի հիման վրա, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Ջերմուկի համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 13-ի N 65-Ա որոշման, հիմք ընդունելով համայնքային գույքը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին մրցույթային հանձնաժողովի 2020 թվականի հունվարի 9-ի N 1 արձանագրությունը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել 2020 թվականի հունվարի 9-ին կայացած համայնքային սեփականություն համարվող, Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղում գտնվող 0.01783 հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ ջրային, կադաստրային ծածկագիրը՝ 10-028-3001-0007) կառուցապատման իրավունքի տրամադրման մրցույթի հետևյալ արդյունքները՝

·Մրցույթում հաղթող ճանաչել «ՆԱԱՆԴ» ՍՊԸ-ին՝ ի դեմս տնօրեն Նաիրի Բաբայանի;

·Կառուցապատման իրավունքի ժամկետը՝ 01.10.2044թ.;

·Կառուցապատման իրավունքի տրամադրման տարեկան վարձավճարի չափը՝ 40 000 (քառասուն հազար) դրամ;

·Կառուցապատման իրավունքի տրամադրման նպատակը՝ ջրատնտեսային, արդյունաբերական կամ էներգետիկ կարիքների բավարարումն ապահովող օբյեկտի շինարարության և շահագործման համար:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի տարածքում կառուցապատողի կողմից կատարված անբաժանելի ներդրումները և բարելավումները համարվում են համայնքային սեփականությունը և շրջակա տարածքի մաքրման, կանաչապատման և բարեկարգման պարտավորությունը կրում է վարձակալը:

3. «ՆԱԱՆԴ» ՍՊԸ-ի հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված գույքի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր:

4. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է «ՆԱԱՆԴ» ՍՊԸ-ի կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

9 հունվարի 2020թ.
ք. Ջերմուկ